



ԽՆԴԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԵՐՈՒՄ

Փետրվարի 6-ին, Երևանի արվեստի աշխատողների տանը, մայրաքաղաքի և մեր Հայրենիքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված կոնֆերանսը: Սովետական կառավարության զինաթափման նոր առաջարկի մեջ Միության բոլոր եղբայրական ժողովուրդների հետ, հայ ժողովուրդն էլ տեսնում է իր շինարար կյանքի նոր հաղթանակը: Որովհետև հայ զինվորը նույնպես տուն է վերադառնում Հայրենի շենքերն ու քաղաքները կառուցելու, հողը մշակելու, կյանքը հարստացնելու համար:

Համագումարին ներկա էր նաև Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը:

Զինաթափման հրատապ և այժմեական հարցին նվիրված զեկուցումով հանդես եկավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ գրող Նաիրի Զարյանը: Այնուհետև ելույթներ ունեցան Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը, բանաստեղծուհի Աղավնին, արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Հ. Ստեփանյանը և ուրիշներ:

Հանուն Հայ Եկեղեցու, հայ հոգևորականության և հայ հավատացյալների, հավաքվածների բուն ծափահարությունների ներքո, ամբողջին է մոտենում Վեհափառ Հայրապետը և ողջունում Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը, օրհնում աշխարհի բոլոր խաղաղասեր մարտիկներին և կոչ է անում չհաջնել բոլոր ջանքերը՝ ամրապնդելու համար խաղաղությունը ողջ աշխարհում: Իր ճառում Վեհափառ Հայրապետն ասում է.

«Էջմիածենն ղեպի Երևան՝ հանապարհին մեր երկնքի ջինջ կապույտ ֆոնի վրա կդի-

տեի վեհատեսիլ մեռ Արարատը, այսօրվա պայծառ արևի շողերուն ներքև: Եվ Արարատը ինձի կթվի խորհրդանշյալ հավերժական խաղաղության: Ինձի այնպես կթվի, թե խաղաղության ներմալ աղավնին, թռչնառած Մասիսի կատարեն, այսօր կսավառնի համայն աշխարհի վրա հաղթական: Այս ոգեշնչումով եկա ձեր մեջ, այստեղ, ուր հավաված են մեր Հայրենիքի խաղաղության կողմնակիցներու արժանավոր ներկայացուցիչները: Թույլ տվե՛ք ուրեմն ձեզ բերել ողջույնը և սրտագին խոսքը Ս. Էջմիածնի: Հայ հոգևորականությունը Հայաստանեն ներս և ի սփյուռս աշխարհի, գլխավորությամբ Ս. Էջմիածնի, անվերապահորեն մասնակցած է խաղաղության համաշխարհային շարժման՝ առաջին իսկ օրեն: Մեր խաղաղությունը կրխի նախ մեր կրոնական հավատքեն, որովհետև մեզ համար Ս. Գիրքը, հատկապես Ս. Ավետարանը, ամեն բանն առաջ և ամեն բանն վեր սիրո և խաղաղության վարդապետություն մըն է: Մեր խաղաղությունը կրխի նաև անշուշտ մեր ազգային պատմության փորձեն և մեր ժողովուրդի գերագույն շահերու գիտակցութենեն: Մենք բոլորս հայ ենք և քաջ ծանոթ մեր անցյալի տխուր պատմության էջերուն, որոնք լեցուն են հանվոր ողբերգություններով, ավերածություններով և նահատակություններով, բոլորը արդյունք պատերազմների, արշավանքների, մեկ խոսքով արդյունք խաղաղության պայմաններու չգոյության: Ահա թե ինչո՞ւ Հայաստանյայց եկեղեցին և Մենք, իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մեր խոր գոհունակությունը և երախտագիտությունը պետք է հայտնենք բոլոր խաղաղության պաշտպաններուն, հատկապես մեր հայրենի կառավարության, որ ինչպես միշտ, վերջին շրջանին անգամ մը ևս հանդես եկավ և խաղաղասեր մարդկու-

քյան սիրտը շարժեց ամբողջական և ընդհանուր գինաքափման առաջարկությամբ և հռահրդային Միության մեջ զինյալ ուժերու կրեատման որոշումով:

Մեր իզմն է և Մեր աղաբքը առ Աստված, որ խաղաղության ոգին առավել ամրապնդվի և դառնա անխորտակելի ամրոց մը և ապանովվի բարօրությունը, հառաչդիմությունը և եղբայրությունը աշխարհի բոլոր ժողովուրդներու: Հայաստանյայց եկեղեցին,

Համագումարի մասնակիցները միաձայն բանաձև ընդունեցին, որով ողջունում և ջերմորեն պաշտպանում են Սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը և հավանություն տալիս խաղաղությունը ամրապնդելու նպատակով նրա բոլոր միջոցառումներին:

Այնուհետև հաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ Ն. Զարյանը Հայաստանի խաղաղության



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՕԳՏԻՆ ԿԱՅԱՑԱՆՍ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

մեր ամբողջ հոգևորականությունը, մեր բոլոր հավատացյալները, ուր ուր ալ գտնվին, պիտի շարունակեն քառզել ու գործել հանուն խաղաղության և հանուն ժողովուրդներու տևական բարեկամության:

Այս մտածումներով, այս հույզներով, թույլ տվե՛ք վերջացնել Մեր խոսքը հին մաղթանքով մը հայկական.

«Տէ՛ր Աստուած հարցն մերոց,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Ազգիս հայոց սէր, միութիւն»:
Ամեն»:

մարտիկների՝ լուսավորության, գիտության, արվեստի, արդյունաբերության, գյուղատնտեսության ֆրոնտում աշխատող 56 հոգու հանձնում է հաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պատվոգրերը: Վերջում ընտրվում են հաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի կողմից փետրվարի 15-ին Մոսկվայում հրավիրվող Համագումարի պատգամավորներ: Այդ պատգամավորների թվումն է նաև Վեհափառ Հայրապետը:

Փետրվարի 7-ին Վեհափառ Հայրապետը ցանկանալով խաղաղության մասին իր

մտածումներին և հուզվածություններին համակից դարձնել նաև իր հավատացյալ զավակներին, հետևյալ բովանդակությամբ պատգամներ հաղորդել, որը ձայնասփռվել է Երևանի ռադիոյից:

«Միրեյի՝ հավատացյալ ժողովուրդ Մեր:

Երեկ, 6 փետրվար 1960, Մեզ համար ուրախության և մխիթարության մեծ օր մը եղավ, ու Երևանի Մայր Աթոռ Սուրբ Եկեղեցիում, մտածեցինք մասնակից ընել նաև ձեզ՝ Մեր հույզներին և Մեր ապրումներին, ձեզ՝ ի սփյուռս աշխարհի ցրված պանդուխտ զավակներ Մեր:

Երեկ մեր մայրաքաղաքի սիրուն դահլիճներին մեկտուն, Արվեստի տան մեջ, մասնակցեցանք մեր Հայրենիքի տաղանդության պաշտպանության կողմնակիցներու հանդիսավոր նիստին, որ եկվիւր ինչպէս Խորհրդային Միության կառավարության կողմէ՝ բոլոր պետություններուն ուղղված՝ ամբողջական զինաթափման առաջարկության, ինչպէս և Խորհրդային Միության զինյալ ուժերու կրճատման որոշումին:

Այս բարի, այս աստվածահաճ առաջարկի առթիւ, հանուն մեր Ս. Եկեղեցիին, հանուն մեր համայն հավատացյալ ժողովուրդին, Ս. Էջմիածնէն Մեր ողջույնը տվինք պատկանելի համագումարին, և անգամ մը ևս օրհնեցինք աշխարհի խաղաղության սրբազան գործը, անգամ մը ևս օրհնեցինք բոլոր խաղաղարարները, որոնց համար մեր Տերը Հիսուս երանելի օր մը ըսավ, թե անոնք զԱստուծոյ պիտի տեսնեն:

Մենք, իբրև Հայաստանյայց Եկեղեցւոյ Հայրապետ, խորապէս մխիթարված ենք, տեսնելով, թե ինչպէս օրե օր կամրանան ճիւղերը խաղաղության և ժողովուրդներու միջև բարեկամության, թե ինչպէ՛ս մեծ պետություններուն ղեկավարները կմոտենան իրարու, առավել կհասկնան զիրար, և միասնական ճիգերով կաշխատին հարթել ճանապարհը՝ ընդհանուր և ամբողջական զինաթափման: Մխիթարված ենք, այո՛, որ մարդկությունը քայլ առ քայլ կհառաջանա ղեպի խաղաղ ու շինարար գոյակցություն, ղեպի բարօրություն և երջանկություն, ղեպի բարօրությունը և երջանկությունը անխտիր բոլոր ազգություններուն:

Բայց, սիրելիներ՝ Մեր, այսօր, երբ մեր սիրտը լեցված է այս մտածումներով ու այս հույզներով, չենք կրնար անտեսել այն տագնապալի կացությունը, որ արտասահմանի հայ գաղութներուն մեջ, տեղ-տեղ սկսած է

դուռ բանալ ներքին խռովություններու և պառակտումներու:

Հայ Սփյուռքի եկեղեցական կյանքը հենու է խաղաղ ու շինարար բլրակ: Մայր տված խռովություններն ու պառակտումները ոչ միայն իրավ իմաստե գուրկ են, և ոչ մեկ շահ չեն բերեր մեր Ազգւոյն, այլ ուղղակի կհանդէմ մեր Ս. Եկեղեցին ու կցրվեն մեր հոգը: Եվ ավելին, ներքին այդ խռովությունները վնասակար ու անպատվարեք կդառնան հայ ժողովուրդին համար հաշտ օտար ժողովուրդներուն և հյուրընկալ պետություններուն: Միեղդեա բոլոր մեր եկեղեցիներուն և բոլոր մեր հավատացյալներուն անխտիր սկզբունք պետք է ըլլա հյուրընկալ երկիրներու մեջ ապրիլ իբրև օրինակ, կարգապահ ու խաղաղասեր քաղաքացիներ:

Ահա թե ինչու Մեր սրբազան պարտք կըկատենք, այսօր անգամ մը ևս Մեր իղձը հայտնելու և Մեր հորդորը ուղղելու Ձեզ բոլորիդ, սիրելի՛ զավակներ Մեր, բոլորիդ անխտիր, որ հայու սիրտ կկրենք, որ մեաք հավատարիմ մեր Տիրոջ և Փրկչին՝ սիրո և խաղաղության Ավետարանին, որ միշտ մտածեք խաղաղության մասին և միշտ գործեք հօգուտ խաղաղության, և մանավանդ սիրո և խաղաղության ոգիով առաջնորդվի՛ք ձեր եկեղեցական համայնքներէն ներս:

Եկեղեցի և անմիաբանություն, եկեղեցի և պառակտում իրար մերժող, իրար ժխտող հասկացություններ են. «Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած, այլ խաղաղութեան, որպէս համայն յեկեղեցիս սրբոց»: Ուրեմն ապրեցե՛ք և գործեցե՛ք և ձեր եկեղեցական, կրթական, մշակութային կյանքը կազմակերպեցե՛ք անաղմուկ, սիրով, միաբան, առաջնորդված մեր սուրբ հավատքի լույսով, որ ամբողջ մեր ժողովուրդին կբաշխվի ավելի քան տասնվեց դարերէ ի վեր, սրբազնասուրբ Էջմիածնի Լուսավորչյան անմար կանթեղէն:

Սիրո և խաղաղության ոգի կհայցենք ի Տյառնէ, նաև Մեր այն զավակներուն համար, որոնք թույլ կարծիքներով շփոթած, անջատումներու կդրստյան ճամբաներու վրա կքափառին: Ս. Էջմիածնի լույսով է, որ ամեն հայ պետք է գտնէ ուղիղ ճանապարհը իր հոգեւոր կյանքին, ուղիղ ճանապարհը ղեպի խաղաղության ու փրկության ճամբան: Ս. Էջմիածնէն է, որ բոլորդ պիտի միացնէ, բոլորդ պիտի ամրացնէ, բոլորդ պիտի ուրախացնէ:

Ուրեմն, սիրելի՛ հավատացյալ որդիներ՝ Մեր, միացե՛ք, գորացե՛ք և շեն ու պայծառ պանծեցե՛ք՝ ձեր եկեղեցիները, հայ դպրության ձեր օջախները: Անսպառ եռանդով ու աճայլալ լավատեսությամբ և միացյալ ուժերով հառաչ տարե՛ք ազգապանծամուն նվիրական գործը, միշտ հավատարիմ մեր եախնայաց լույս հավատիին, միշտ հավատարիմ հավերժական լույսի փառոս Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, միշտ հավատարիմ հայ ժողովուրդի սրբություններուն:

Բոլորիդ ողջույն, բոլորիդ օրհնություն՝ Փրկչի Իշման Ս. Սեղանեն:

Բոլորիդ ողջույն, բոլորիդ օրհնություն սուրբգրական Մասիս սարեն:

Բոլորիդ ողջույն մեր սրտերեն, ձեզ միշտ սիրող կարոտավառ մեր սրտերեն:

Քոզ Տեր մեր ամենակալ մեզ ամենուս ողորմի և պարզե՛ն այժմ և միշտ՝ «խաղաղութիւն աշխարհիս, սէր, միութիւն Հայոց Ազգիս»: Ամեն:

Փետրվարի 12-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց իսաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պաշտոնական հրավերը և ուղևորվեց Մոսկվա՝ մասնակցելու զինաթափման օգտին սովետական հասարակայնության համագումարին:

Առավոտյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված միաբանությամբ, Մայր Տաճար է՝ մտնում՝ Իշման Ս. Սեղանի առաջ աղոթք մատուցելու, ապա միաբանության հետ ճանապարհվում դեպի Երևանի օդանավակայանը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհելու էին եկել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդը, քահանայական դասը, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը:

Դեպի Մոսկվա Վեհափառ Հայրապետին ընկերանում են Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեշնորհ Տ. Հուսիկ Վարդապետ Սանթուրյանը և բարեշնորհ Սանդրո սարկավազ Բհհրուդյանը:

Տեղական ժամանակով ժամը 10-ին, ինքնաթիռը կտրվելով հողից, ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա և երեկոյան ժամը 7-ին վայրէջք կատարում Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի անդամ պր. Սուլվյովը,

Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարզե վարդապետ Գևորգյանը, Տ. Խաչատուր ավագ քահանան, եկեղեցական շատուր ավագ քահանան, հայ հավատորդի անդամները և հայ հավատացյալներ: Պր. Սուլվյովը, հանուն Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի և իսաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի, բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին:

Փետրվարի 14-ին, Կիրակի, Մոսկվայի հայոց եկեղեցին լի է հայ հավատացյալ ժողովրդով: Մատուցվում է սուրբ պատարագ: Պատարագին է գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսը: Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է եկեղեցի՝ «Հայր մեր»-ից առաջ նորին Ս. Օծուխյունը իր հայրապետական ողջույնն ու օրհնությունն է բաշխում բոլոր ներկաներին:

Փետրվարի 15-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է դեպի Կրեմլ, ուր Կրեմլի թատրոնի շենքում բացվում է զինաթափման օգտին սովետական հասարակայնության կոնֆերանսը: Կոնֆերանսի դահլիճն էին հավաքվել Սովետական երկրի բոլոր միութենական և ավտոնոմ ռեսպուբլիկաների, երկրամասերի և մարզերի պատվիրակները՝ գրողներ, գիտնականներ, հասարակական գործիչներ, բանվորներ և ուսանողներ, որպեսզի մեր երկրի ամբողջ ժողովրդի միահամուռ կամքը արտահայտեն հանուն ամբողջական զինաթափման և իսաղաղության ամրապնդման:

Նախագահության սեղանի շուրջ տեղ է հատկացվում Վեհափառ Հայրապետին: Դահլիճում հյուրերի թվում են իսաղաղության Համաշխարհային խորհրդի պատվիրակությունը, չին գիտնականների պատվիրակությունը, Բուլղարիայի, Հունգարիայի, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի, Հնդկաստանի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և այլ երկրների իսաղաղության պաշտպանության կողմնակիցների շարժման ներկայացուցիչները, ԱՄՆ-ի կվակերների պատվիրակությունը, Սովետական Միության կրոնական համալսարանների պետեր, ղեկավարներ, ներկայացուցիչներ: Այդ տարբեր համոզմունքների և դավանանքի տեր մարդիկ կողք-կողքի են եկել՝ քվեարկելու հանուն ընդհանուր և լրիվ զինաթափման, հանուն ժողովուրդների իսաղաղության և բարեկամության:

«Սովետական ժողովուրդը կողմնակից է ընդհանուր և լրիվ զինաթափման» հարցի վերաբերյալ ընդարձակ և բովանդակալից զեկուցում է կարդում իսաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի նախագահ գրող Ն. Ս. Տիխոնովը:

Փետրվարի 15-ի առավոտյան նիստում ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ա. Վ. Թոփչիևը, գրող Իլյա էրենբուրգը, Սովետական Միության մարշալ Կ. Ա. Մերեցկովը և ուրիշներ: Սրտատու էր բելոուս ուսուցչուհի, նախկին պարտիզանուհի Ա. Կոզերիկովը, որն իր աչքերով տեսել էր պատերազմի արհավիրքները, իր հարազատների մորթումները: «Որպես մայր, ես չեմ ուզում, որ իմ երեխաները, ամբողջ երկրագնդի երեխաները, ապրեն այդ արհավիրքը: Իմ մեծագույն ցանկությունն է, որ երեխաները

վույ, որը լավեց մեծ հետաքրքրությամբ և բուռն ծափահարությամբ:

«Հայ ժողովուրդի հավատքի կեդրոն Ս. Էջմիածնեն թույլ տվե՛ք ողջունել այս համազումարը, ուր հավաքված են խորհրդային Միության Մեծ Հայրենիքի բազմամիլիոն խաղաղասեր մարդոց ամենաականավոր ներկայացուցիչները: Այս հանդիսավոր առիթով, իբրև Հայոց Հայրապետ, խանդավառ սիրով կուգանք անգամ մը ևս ողջունելու մեր Հայրենի կառավարության խաղաղասիրական աստվածահանո փաղափականու-



ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ԱՌԱՋ

ծպտան, ծաղիկներ աճեցնեն, դպրոցներ հաճախեն, ապրեն կյանքի բերկրանքը»:

Երեկոյան նիստում հանդես եկան ՍՍՌՄ ժողովրդական արտիստ, Վրաստանի խաղաղության պաշտպանության կոմիտեի անդամ Ա. Ա. Խորավան, ՌՍՖՍՌ Մանկավարժական գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ի. Ա. Կաիրովը, ակադեմիկոս Լ. Ի. Սեդովը և ուրիշներ:

Երեկոյան նիստում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուսանողներին լեզ-

քյունը և ի մասնավորի մեր երկրի իմաստուն և մարդասիրական անսպառ եռանդով լեցուն Վարչապետ Նիկիտա Խրուշչովի առաջարկությամբ ամբողջական զինաթափման, ուղղված աշխարհի բոլոր պետություններուն:

Հարգանք և շնորհակալություն մեր կառավարության և բոլոր մեծ պետությանց ազնիվ ղեկավարներուն, որոնք միասնական ջանքերով կաշխատին հարթել ճանապարհը ընդհանուր և ամբողջական զինաթափման, որոնք կաշխատին մարդկությունը առաջ-

նորոգել զեպի խաղաղ ու շինարար գոյակցութիւնն և զեպի ընդհանուր բարօրութիւնն:

Ս. Գիրքը կ'աւանդուի մեզ բոլորիս՝ հրաշարի կյանքի հին զգեստներէն «և նորագիւ հագումն մտաց» և «զգեցնու զնոր մարդն» (Եփես. Դ 24):

Մարդկային ողբերգութիւններով լեցուն, երկար դարերու պատմութեան փորձէն հետո, ավելի քան երբեք անհրաժեշտ է իրոք, որ մեր օրերու մարդիկ, մանավանդ պետութեան ղեկավար մարդիկ, եկեղեցիներու պետեր ու հասարակական գործիչներ, հետեւեալ մտածումի և գործելակերպի հին կաղապարներէն և համարձակ վեճակներէն զերտեալ զան իբրև նոր մարդիկ, նոր ոգիով, նոր խոսքով և նոր գործով: Մեր օրերու ճշմարիտ նոր մարդը խաղաղութեան մարդն է, մերկացած հին նախապաշարումներէ, հին բշտութիւններէ, մերկացած անհանդուրժող ոգիէ, մերկացած՝ իր նմանին աշխատանքը, հողն ու ազատութիւնը հափքողական կիրքներէ, կիրքեր, որոնք դարձեալ շարունակ բնորոշած են, ավա՜ղ, հարսբերութիւնները մարդկային հասարակութեան և միջազգային կյանքին, ծնունդ տալով անբխի-անհամար պատերազմներու, արեւակիրներու և անավոր տառապանքներու:

Նոր մարդը, խաղաղութեան մարդը, պետք է ըլլա բարի ձեռներով կառուցող մարդը: Նոր մարդը, խաղաղութեան մարդը, իր նմանին մեջ պետք է տեսնէ իր աշխատակիցը, իր օգնականը, իր եղբայրը:

Այսուհետեւ, խաղաղութեան ու մարդասիրութեան ոգիով նորոգված մարդիկ բոլոր աշխարհներէն ժողովուրդները՝ զեպի կյանքի ապահովութիւն, զեպի հառաջդիմութիւն, զեպի ծաղկումը գիտութիւններու և արեւմտեաներու, զեպի երջանկութիւն:

Հայ ժողովուրդը և Հայ եկեղեցին ևս խաղաղութեան դատին վերջնական հաղթանակին մեջ կ'ոտնեն իրենց կյանքի անվրտանգութիւնը, իրենց հառաջդիմութեան և բարօրութեան գրավականը և իրենց ոսկի ապագայի ապահովումը:

Հայ եկեղեցին, Ս. Էջմիածնի գլխավորութեամբ, ինչպէս ցարդ, նաև այսուհետեւ պիտի շարունակէ իր ծայր բարձր հնչեցնել և իր աշխատանքը շարունակել հաճուն խաղաղութեան և հաճուն ժողովուրդներու եղբայրութեան:

Մենք արդեն Մեր հոգիի աշխարհով կ'ոտնենք, քեզ «արդ, ժամ իսկ է մեզ ի քնոյ ցարբնու, զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաք. զիշերն մերժեցաւ և տրին մերձեցաւ» (Հով. ԺԳ 12), զի «պարմութիւն և ճշմարտութիւն պատանե-

ցին, արդարութիւն և խաղաղութիւն համարեցին» (Սաղմ. ՄԵ 11):

Ողբնայն և օրհնութիւն խաղաղութեան սրբազան գործին: Ողբնայն և օրհնութիւն բոլոր խաղաղարարներուն: Ողբնայն և օրհնութիւն խաղաղութեան պատվար տարբեր-դային Միութեան:

խաղաղասեր եղբայրներ և քույրեր, ձեզ բոլորիդ կ'մաղթենք անսպառ եռանդ ու պայծառ լավատեսութեան ոգի և փառավոր հաղթանակ:

Փետրվարի 16-ին, երեքշաբթի, առավոտյան նիստում ընթերցվեցին բաղմամբով ողջույնի հեռագրեր մեր Երկրից և արտասահմանից: Ապա ելույթ ունեցավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի, որն իր ելույթում նշեց, որ Ռուսական Ողջափառ Եկեղեցին, ինչպէս միշտ, այժմ էլ աննկուն կերպով պաշտպանում է Սովետական կառավարութեան խաղաղասիրական առաջարկութիւնը և բոլոր խաղաղասեր մարդկանց հետ պահանջում է սրբից խոփեր և նիզակներից մանգաղներ կոփել:

Կոնֆերանսում ելույթ ունեցան նաև խաղաղութեան Համաշխարհային հորհրդի նախագահութեան անդամ, խաղաղութեան պաշտպանութեան կանադական կոնգրեսի նախագահ Զինյա Էնդիկոտը, խաղաղութեան Համաշխարհային հորհրդի քարտուղար պրոֆ. Վ. Մ. Զիսկիվաձեն, ակադեմիկոս Ն. Վ. Յիցինը, գրող Ն. Զարյանը և ուրիշներ:

Փետրվարի 16-ի երեկոյան նիստում ելույթ ունեցան խաղաղութեան պաշտպանութեան Անգլիական կոմիտեի նախագահ Գորդոն Շաֆերը, Իտալական խաղաղութեան շարժման ներկայացուցիչ Զոյա Լուսան, գրող Բորիս Պոլեկոյը, ԱՄՆ-ի խաղաղութեան կողմնակիցների անունից կոնֆերանսին սրտագին շնորհավորանքներ հաղորդեց ամերիկացի գրող Ալբերտ Կան: Կոնֆերանսը արտահայտեց սովետական ժողովուրդի և խաղաղասեր մարդը ժողովուրդների կամքը և ընդունեց բանաձև միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու մասին, և դիմում՝ աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերին:

Փետրվարի 17-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց Ռիգայի և Համայն Լատվիայի արքեպիսկոպոս Գուստավ Տուրսը և երկու հայրապետների միջև տեղի ունեցավ սրտագին զրույց:

Փետրվարի 18-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետը այցելեց ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առնթրեց Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Պուզինին և եկեղեցական հարցերի շուրջ զրույց ունեցավ

ներա հետո նույն օրը, հետմիջօրերին, Վեհափառ Հայրապետը այցելեց Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին՝ Պատրիարքարանում։ Ընդունելությունը տեղեց մոտ մեկ ժամ և բույր Եկեղեցիների երկու Պետերը ունեցան շերմ զրույց, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Ալեքսի Պատրիարքին հրավիրեց ամառը այցելել Ս. Էջմիածին։

Փետրվարի 19-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետը «Մոսկվա» հյուրանոցում ընդունեց արգենտինահայ տուրիստներին։ Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի անդամներին և երգեցիկ խմբին և եկեղեցական հարցերի շուրջ զրույց ունեցավ նրանց հետ։ Ի պատիվ նրանց Վեհափառ Հայրապետը կազմակերպեց ճաշկերույթ։

Փետրվարի 20-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Մոսկվայից և վերադարձավ ինքնաթիռով Թբիլիսի՝ Իր շքախմբով մասնակցելու համար Վրաց նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Ծփրեմ միտրոպոլիտի գահակալության հանդեսներին։

Փետրվարի 20-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առավ Մոսկվայից և վերադարձավ ինքնաթիռով Թբիլիսի՝ Իր շքախմբով մասնակցելու համար Վրաց նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Ծփրեմ միտրոպոլիտի գահակալության հանդեսներին։

